ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԻՔ

Դրամաշնորհային ծրագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-2011

ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հայտարարված “Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումներ” դրամաշնորհային ծրագրով Հայաստանի պետական ագրարային համալսարանը մրցույթում հաղթող է ճանաչվել “Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի բարելավում՝ որպես շարժունությունն ապահովող և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման կարևոր գործիք” ծրագրով:

Ծրագիրի տևողությունը 2011թ.-ի փետրվար-հուլիս ամիսներ (6 ամիս):

Ծրագրի իրականացման աշխատանքային հանձնախմբի կազմն է.

1. Յուրի Մարմարյան - ծրագրի ղեկավար, ՀՊԱՀ Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, գյուղտնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. Սմբատ Դավեյան - ՀՊԱՀ Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. Արա Ամիրյան - տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Գրաֆիկայի և Ճարտարագիտական գրաֆիկայի ամբիոնի վարիչ,
4. Լևոն Տեր-Իսահակյան - օպերատոր, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, ՀՊԱՀ Մասնավոր անասնաբուծության ամբիոնի ասիստենտ,
5. Բավինա Օլգա – ծրագրի ադմինիստրատիվ հարցերով օգնական, հաշվապահ:

Դրամաշնորհային ծրագրի հիմնական խնդիրներն էին.

1. Գործող ուսումնական պլանների (3-5 արմատական կառուցվածքային վերակառուցում՝ ուղենիշ ունենալով դրանց մոդալացումը և արտահայտումը ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը արտահայտող կրեդիտային արժեքներով:
2. Կրեդիտային համակարգի անցման պահանջներին համահունչ ակադեմիական գրանցումների փաստաթղթավորման վերանայում, էլեկտրոնային դեկանատների ստեղծման նախապայմանների մշակում:
3. Նշված մասնագիտությունների գծով դիպլոմի հավելվածի մշակում (3-5)
4. ՀՊԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի անձնակազմի (2) և դասախոսների վերապատրաստում ՀՊԱՀ-ում (5) Կրեդիտային համակարգով կրթության կազմակերպում և ներդրում (1 շաբաթ տևողությամբ): Սեմինարների կազմակերպում ՀՊԱՀ-ում կամ Ստեփանակերտում (2 անգամ)
5. Նշված ծրագրի իրականացման տեխնիկական միջոցների ձեռք բերում
6. ՀՊԱՀ անձնակազմի (1) և դասախոսների (2-3), որից մեկը՝ Ստեփանակերտի մասնաճյուղից՝ վերապատրաստում Գերմանիայի դաշնության Կասսելի համալսարանում:

Վերոհիշյալ գործողությունների իրականացման համար պլանավորվել է հետևյալ ժամանակացույցը.

Հ/հ	Առաջադրված խնդիրների անվանումը	Իրականացման ամիսները						Ծանոթություն
		1	2	3	4	5	6	
1	2	3	4	5	6	7	8	9
1	Համալսարանում գործող (3-5) մասնագիտությունների ուսումնական պլանների վերանայում, կրեդիտային հենքով դրանց մոդուլացում	+	+	+	+	+		
2	Կրեդիտային համակարգին անցման պահանջներին համապատասխան ակադեմիական գրանցումների փաստաթղթավորման վերանայում, ուսանողների ակադեմիական տեղեկագրերի վերանայում, էլեկտրոնային դեկանատների ստեղծման նախապայմանների մշակում		+	+	+	+	+	
3	Դիպլոմի հավելվածի մշակում (3-5) մասնագիտությունների համար			+	+	+	+	
4	Ստեփանակերտի մասնաճյուղի անձնակազմի և դասախոսների վերապատրաստում կրեդիտային համակարգով ուսուցման և կազմակերպման նպատակով (7 անձ) - Սեմինարների կազմակերպում ՀՊԱՀ-ում կամ Ստեփանակերտում		+		+			
5	ՀՊԱՀ անձնակազմի և դասախոսների վերապատրաստում - Գերմանիայի դաշնության Կասելի համալսարանում, 2 անձ, 1 շաբաթ		+					1 անձ Ստեփա-նակերտի մասնաճյուղից
6	Ծրագրի իրականացման նպատակով տեխնիկական և տեխնոլոգիական միջոցների ձեռք բերում	+	+					
7	Ծրագրի հաշվետվության կազմում, քննարկում և ներկայացում						+	

Ծրագրի նախատեսված բյուջեն ամփոփված է ստորև բերված աղյուսակում.

Հ/Հ	Բյուջեի հոդված	Չափման միավորի արժեքը, հազար դրամ	Ընդհանուր արժեքը, հազար դրամ	ԴԾ-ից ակնկալվող գումարը	Այլ աղբյուրներից ներդրում
I. գործուղում					
1.	Գերմանիայի Կասսելի համալսարան 2 վարչական աշխատող,	600	1200	1200	
	1 դասախոս Ստեփանակերտի մասնայուղից	600			
III. Տեխնիկական միջոցներ					
1.	Համակարգիչ և պրինտեր	360	360		360
2.	Պատճենահանող սարք	230	230		230
3.	Պրոյեկտոր մուլտիմեդիա	310	310		310
III. Աշխատավարձ					
1.	Համակարգող	50	300	300	
2.	Աշխատանքային խմբի անդամ	40	240	240	
3.	Աշխատանքային խմբի անդամ	40	240	240	
4.	Օպերատոր	30	180	180	
5.	Ծրագրի ադմինիստրատիվ հարցերով օգնական, հաշվապահ	30	180	180	
	ԸՆԴԱՄԵՆԸ		3900000	3000000	900000

Նախատեսված գործողումը ՌԴ Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիա չի կայացել ֆինանսների պակասության պատճառով:

Ծրագրից ակնկալվող արդյունքները հետևյալն էին.

1. *Համալսարանում գործող մասնագիտությունների (3-5) ուսումնական պլանների վերանայում, կրեդիտային համակարգի հենքով դրանց մոդուլացում և արտահայտումը ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունն արտահայտող կրեդիտային արժեքներով:*
2. *Կրեդիտային համակարգին անցման պահանջներին համահունչ ուսումնական գործընթացի կառավարմանփաստաթղթավորման համակարգերի վերակազմակերպում:*
3. *Գործուղումների արդյունքում համալսարանի վարչական աշխատակիցների և ուսանողների Եվրոպական և Ռուսաստանի դաշնության ԲՈՒՀ-երում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման փորձի ձեռք բերում:*
4. *Անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի և տեխնիկական միջոցների ձեռքբերում*
5. *Համալսարանի ուսանողության և դասախության կազմի շրջանում Բոլոնյան գործընթացի, մասնավորապես կրեդիտային համակարգի ներդրման, որակի կառավարման համակարգի կայացման և ուսանողների ու դասախոսական կազմի շարժունության վերաբերյալ սեմինարների կազմակերպում ՀՊԱՀ-ում կամ Ստեփանակերտի մասնաճյուղում:*

1. Գործող ուսումնական պլանների (3-5 արմատական կառուցվածքային վերակառուցում՝ ուղենիշ ունենալով դրանց մոդուլացումը և արտահայտումը ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը արտահայտող կրեդիտային արժեքներով:

Ծրագրի շրջանակներում վենայալվել են մասնավորապես հետևյալ մասնագիտությունների ուսումնական պլանները՝ Անասնաբուժություն, Անասնաբուծություն, Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն: Վերջին 2 ծրագրերն ամբողջությամբ վերանայվել են Եվրոպական անասնաբուժական միության պահանջներին համապատասխան, իսկ ս/թ. հուլիս-օգոստո ամիսներին ԱՄՆ մասնագետների հետ կքննարկվի անասնաբույժ մասնագետների վերապատրաստումների, դաշտային անասնաբուժության հիմնախնդիրների հետ կապված կենսաբանական վտանգների և կենդանիների հիվանդությունների մոնիթորինգի ու էլեկտրոնային բազայի ստեղծման հիմնահարցերը, որոնք հնարավոր է հետագայում ևս ընդգրկվեն ուսումնական պլաններում (ուսումնական պլանները կցվում են):

2. Կրեդիտային համակարգի անցման պահանջներին համահունչ ակադեմիական գրանցումների փաստաթղթավորման վերանայում, էլեկտրոնային դեկանատների ստեղծման նախապայմանների մշակում:

Ծրագրի իրագործման ընթացքում լիովին վերանայվել և համապատասխան փոփոխությունների են ենթարկվել են հետևյալ ակադեմիական գրանցումների փաստաթղթերը՝

- *Ուսումնական պարապմունքների մատյան (մասնակի փոփոխվել է)*
- *Ուղեգրեր՝ նախատեսված ուսանողների կողմից բաց թողած ժամերը լրացնելու, անհատական կամ խմբային կարգով կատարելու, վճարովի և անվճար հիմունքներով տարբերություն առարկաների ծրագիրը կատարելու համար,*
- *Դասախոսներին ժամավճարային կարգով վճարելու դիմումի ձև,*
- *Ուսանողների հաճախումների վերաբերյալ տեղեկաթերթիկ (մասնակի փոփոխվել է)*
- *Վճարովի ծառայությունների մատուցման կատարողական ակտ (մասնակի փոփոխվել է)*
- *Քննական (միջանկյալ և ամփոփիչ)տոմսերի ձևաթերթ (մասնակի փոփոխվել է)*
- *Դասախոսի աշխատանքային պլան (մասնակի փոփոխվել է)*
- *Ամբիոնների կողմից ներկայացվող ուս. տարվա պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական ծանրաբեռնվածության և անհատական դրույքաչափերի զեկուցագիր (մասնակի փոփոխվել է)*
- *Դասերի ստուգումների արդյունքների ներկայացման թերթիկ (մասնակի փոփոխվել է)*
- *Ուսանողների թվակազմի վերաբերյալ տվյալներ (մասնակի փոփոխվել է)*
- *Տեղեկություններ ամբիոնի տվյալ կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ (մասնակի փոփոխվել է)*
- *Ուսանողների գիտելիքների ընթացիկ ստուգման և քննության տեղեկագիր (մասնակի փոփոխվել է)*
- *Տիտղոսաթերթի օրինակելի ձևեր՝ հաշվարկագրաֆիկական աշխատանքների, կուրսային նախագծերի, լաբորատոր աշխատանքների համար*
- *Դիպլոմային աշխատանքերի (նախագծերի) պաշտպանության արձանագրությունների մատյան*
- *Պետական քննությունների արձանագրությունների մատյան*
- *Տեղեկանք ուսանողների հաճախումների վերաբերյալ (մասնակի փոփոխվել է)*
- *Դասացուցակը կազմելու համար քաղվածք (մասնակի փոփոխվել է)*
- *Ամբիոնի դասախոսական կազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխում (մասնակի փոփոխվել է)*
- *Դիպլոմային աշխատանքի (նախագծի) ղեկավարի կարծիք (մասնակի փոփոխվել է)*
- *Դիպլոմային աշխատանքի (նախագծի) տիտղոսաթերթ (մասնակի փոփոխվել է)*
- *Գրախոսական դիպլոմային աշխատանքի (նախագծի) վերաբերյալ (մասնակի փոփոխվել է)*
- *Դիպլոմային աշխատանքի (նախագծի) առաջադրանք (մասնակի փոփոխվել է)*
- *Համալիր պետական քննությունները հանձնած և դիպլոմային աշխատանքները պաշտպանած ուսանողների որակավորման շնորհման և դիպլոմ տալու որոշման թերթիկ (մասնակի փոփոխվել է)*

- *Ուսանողի անձնական գործում գտնվող փաստաթղթերի ցանկ (մասնակի փոփոխվել է)*
- *Պետական քննական հանձնաժողովի անդամի քննաթերթիկ (մասնակի փոփոխվել է)*
- *Պետական քննություններին մասնակցելու թույլատրված ուսանողների ցուցակ (մասնակի փոփոխվել է)*
- *Պետական որակավորման հանձնաժողովի անդամների և քննող դասախոսների ժամավճարի զեկուցագիր (մասնակի փոփոխվել է)*
- *Շրջիկ թերթիկ (մասնակի փոփոխվել է)*
- *Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր (մասնակի փոփոխվել է)*
- *Տեղեկանք ուսանողի համար (մասնակի փոփոխվել է)*
- *Առարկայի դասընթացներից ուսանողի ազատման թերթիկ (մասնակի փոփոխվել է)*
- *Դիպլոմային նախագծի գրախոսման ուղարկելու թերթիկ (մասնակի փոփոխվել է)*
- *Օրացուցային պլան (մասնակի փոփոխվել է)*
- *Կուրսային նախագիծ (աշխատանք) կազմելու համար առաջադրանք (մասնակի փոփոխվել է)*
- *Տվյալներ քննաշրջանի արդյունքների վերաբերյալ (մասնակի փոփոխվել է)*
- *Ամբիոնում ուսումնական ծանրաբեռնվածությունը կատարելու թերթիկ*
- *Քննաշրջանի արդյունքների վերաբերյալ տվյալներ ըստ ֆակուլտետի*
- *Տվյալներ պետական քննությունների և դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանության արդյունքների մասին*
- *Պետական քննության թերթ*
- *Պայմանագիր ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչներով սահմանված բակալավրային կրթական ծրագրով ուսուցում իրականացնելու վերաբերյալ (մասնակի փոփոխվել է)*
- *Ուսանողների հաճախումների հաշվառման և անհատական պարապմունքների կազմակերպման կանոնակարգ*
- *Դեկանատներում պահվող փաստաթղթերի անվանացանկ (մասնակի փոփոխվել է)*
- *Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպում. ընթացակարգը մշակվել, հրատարակվել, տրամադրվել է բոլոր դասախոսներին, ուս. խորհրդին և տեղադրվել է ՀՊԱՀ կայքում (700 օրինակ, օրինակը կցվում է):*

Կազմակերպվել է սեմինար ՀՊԱՀ դասախոսների և ամբիոնների վարիչների հետ “Կրեդիտային համակարգով ուսուցման կազմակերպման հիմնահարցերը թեմայով”: Վերոհիշյալ սեմրնարին մասնակցել են ըստ ֆակուլտետների.

- *Ագրոնոմիական՝ 50*
- *Անասնաբուժական բժշկ. և անասնաբուծ.՝ 30*

- *Պարենամթերքի տեխնոլոգիաների՝ 57*
- *Գյուղ. մեքենայացման և ավտ. տրանսպորտի՝ 59*
- *Հողրոմելիորացիայի, հողշին. և հող. կադաստրի՝ 35*
- *Տնտեսագիտական՝ 63*
- *Ագրոբիզների և շուկայաբանության՝ 16*

- *Ընդամենը՝ 310*

Կազմակերպվել է նաև սեմինար ուսանողների հետ՝ "Ուսանողների շարժունության խթանման և ապահովման հիմնահարցը" թեմայով:

Փոփոխված փաստաթղթերը նախատեսվում է գործածության մեջ ներդնել նոր ուսումնական տարվանից:

3. Նշված մասնագիտությունների գծով դիպլոմի հավելվածի մշակում (3-5)

Ըստ դրամաշնորհային ծրագրի նախատեսված էր մշակել դիպլոմի հավելվածներ 3-5 մասնագիտությունների համար, որոնք կհամապատասխանեն այդ փաստաթղթին ներկայացվող եվրոպական չափանիշներին և չափորոշիչներին:

Ծրագրի արդյունքում մշակվել են թվով 7 մասնագիտությունների դիպլոմի հավելվածներ. 1. անասնաբուծություն, 2. անասնաբուժական բժշկագիտություն, 3. անասնաբուժական սանիտարական փորձաքննություն, 4. հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում և պահպանում, 5. հողաշինարարություն և հաղային կադաստր, 6. կաթի և կաթնամթերքների տեխնոլոգիա, 7. կենսագործունեության անվտանգություն և անվտանգությունն արտակարգ իրավիճակներում (օրինակները կցվում են):

4. ՀՊԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի անձնակազմի (2) և դասախոսների վերապատրաստում ՀՊԱՀ-ում (5) Կրեդիտային համակարգով կրթության կազմակերպում և ներդրում (1 շաբաթ տևողությամբ): Սեմինարների կազմակերպում Երևանում (2 անգամ)

Ծրագրի շրջանակներում ՀՊԱՀ-ի Արցախի մասնաճյուղի 7 դասախոսներ վրապատրաստվել են ՀՊԱՀ-ում՝ կրեդիտների կուտակման և փոխանցման, Բոլոնիայի գործընթացների, կրթության որակի ապահովման և վերահսկման մեխանիզմների վերաբերյալ: Վերապատրաստումների նպատակն էր՝ Արցախի մասնաճյուղում խթանել կրեդիտային համակարգի ներդրման գործընթացն ու որակի ապահովման մեխանիզմների կայացումը: Վերապատրաստումն իրականացվել է 3 փուլով, որին մասնակցել են.

Հունվարի 31-փետրվարի 4

1. Հակոբյան Գեորգի – ագրոնոմիայի, անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ամբիոնի վարիչ

Փետրվարի 21-24

1. Շահնազարյան Սերյան – տնօրենի ուսումնագիտական աշխատանքերի գծով տեղակալ

2. Մանգասարյան Էլզա – ԱՊՀ էկոնոմիկայի, ագրոբիզնեսի, հաշվապահական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ

3. Հարությունյան Ռոբերտ – ինֆորմատիկայի և մաթեմատիկական մեթոդների, վիճակագրության և բիոմետրիայի ամբիոնի վարիչ

4. Սարգսյան Արծվիկ – տնօրենի տեղակալ միջին մասնագիտական աշխատանքների գծով

Փետրվարի 14-18

1. Գալստյան Սարիբեկ – ագրարային չարտարագիտական և տեխնոլոգիական ֆակուլտետի դեկան

2. Հարությունյան Վալերիկ – գյուղատնտեսության մեքենայացման և տրանսպորտային փոխադրությունների ամբիոնի վարիչ

5. Նշված ծրագրի իրականացման տեխնիկական միջոցների ձեռք բերում

Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել.

- *Համակարգիչ Intel Core I5 760*
- *Մոնիտոր Samsung B1930 NW*
- *Պրոեկտոր Mitsubishi ES200U*
- *Պրոեկտորի էկրան 200X200*
- *Բազմաֆունկցիոնալ սարք HP LJ M1132 MFP*
- *Տպիչ Canon LBP-2900*
- *Հիշողության քարտ Kingston 4GB*

Այդ տեխնիիկական միջոցները օգտագործվելու են դրամաշնորհային ծրագրի և կրթության բարեփոխումների գործառույթների իրականացման նպատակներով: Գնման փաստաթղթերը կցվում են:

6. ՀՊԱՀ անձնակազմի (1) և (2) դասախոսների (որից մեկը՝ Ստեփանակերտի մասնաճյուղից) վերապատրաստում Գերմանիայի դաշնության Կասսելի համալսարանում:

Համաձայն այդ ծրագրի և ՀՀ կրթության և գիտության նախարարության ու ՀՊԱՀ-ի միջև կնքված 2010թ. Դեկտեմբերի 27-ի N1 պայմանագրի, մայիսի 23-ից 30-ը ՀՊԱՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Յու. Մարմարյանը, Կրթական բարեփոխումների և կրեդիտային

համակարգի ներդրման գծով առաջատար մասնագետ Գ. Համբարձումյանը և Արցախի մասնաճյուղի Ագրոնոմիայի և տենտեսագիտության ֆակուլտետի դեկան Ա. Ղուլյանը գործուղվեցին Գերմանիայի դաշնության Կասսելի համալսարան: Գործուղման հիմնական նպատակներն էին.

Կրեդիտային համակարգով ուսումնառության կազմակերպման ուսումնասիրություն.

- *ծանոթանալ ուսումնական պլանների, առարկայական կամ մոդուլային ծրագրերի կազմման ընթացակարգին*
- *ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսումնառության կազմակերպմանը, ակադեմիական փաստաթղթավարությանը (արդյունքների ամրագրման փաստաթղթեր՝ քննաթերթեր, դիպլոմի հավելված, գնահատման թերթիկներ և այլն) և դրանց կազմման ընթացակարգերին*
- *ծանոթանալ համալսարանում գործող կրեդիտային համակարգի համար պատասխանատու կազմակերպչական-կադրային քաղաքականությանը,*
- *ծանոթանալ ուսանողների խորհրդատուների ամրագրման մեթոդներին, արդյունքներին, մեխանիզմներին և խնդիրներին,*
- *ուսումնասիրել համալսարանում կրեդիտային համակարգին առընչվող էլեկտրոնային միջոցների կիրառման ոլորտներն ու տեսակները (էլեկտրոնային դեկանատներ, հաշվարկների էլեկտրոնային տարբերակներ, ծրագրեր և այլն)*
- *ուսումնասիրել համալսարանում ուսանողների գնահատման համակարգը (գնահատման եղանակներ, գնահատման գործիքներ) և գնահատման գրանցման և ամրագրման առանձնահատկություններին (գնահատման թերթիկներ)*
- *ուսանողների և դասախոսների շարժունակության ապահովման մեխանիզմները և խնդիրները (երկրից երկիր, միջբուհական)*
- *ուսումնասիրել դասընթացների կազմակերպման ձևերին և մեթոդներին (ինտերակտիվ ուսուցում, տեսական և գործնական դասերի վարման ձևեր)*

Կրթության որակի կառավարման համակարգի ուսումնասիրություն.

- *ուսումնասիրել կրթության որակի կառավարման համակարգը, կրթության որակի գնահատման չափանիշները և վերահսկողության մեխանիզմները*
- *դասախոսների որակին ներկայացվող պահանջները, նրանց գնահատման եղանակները*
- *ուսումնասիրել կրթության որակի ներքին և արտաքին գնահատման մեխանիզմները:*

Վիցենհաուզենի համալսարանում հանդիպում եղավ Օրգանական սննդի և որակի և սննդի կուլտուրայի դեպարտամենտի պետ, պրոֆ. Անգելիկա Պլոգերի հետ: Վերջինս ընդհանուր ներկայացրեց համալսարանի կառուցվածքային առանձնահատկությունները, համալսարանում

սովորելու պայմաններն ու ուսումնառության կազմակերպման ընթացակարգը, ուսանողների և գործընկեր դասախոսների կողմից դասախոսների գնահատման գործող համակարգը, դասախոսների որակի վերահսկման մեխանիզմները, բակալավրային և մագիստրոսական քննական ամփոփիչ ավարտական եղանակները: Մանրամասնորեն քննարկվել են նաև եվրոպական հավատարմագրման գործող մեխանիզմները, մագիստրոսական մոդուլային ծրագրերի մշակման, հաստատման և հավատարմագրման ընթացակարգերը, ինչպես նաև մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության մեխանիզմները:

Վիցենհաուզենի համալսարանում հանդիպումներ եղան նաև Օրգանական գյուղատնտեսության ֆակուլտետի Դասավանդման դեկան պրոֆ. Վերներ Տրոշբախի, պրոֆ. Պիտեր ֆոն Ֆրագստեյնի, Միջազգային ուսուցման գործերով պատասխանատու Ուտե Գիլլեսի հետ: Նրանք հանգամանորեն ներկայացրեցին օրգանական գյուղատնտեսության ֆակուլտետի կազմավորման պատմությունը, դրան նպաստող գործոնները (ժողովրդի պահանջ, ուսանողների ցանկություն, ֆերմերային տնտեսության զարգացում, ֆակուլտետի հեղինակության բարձրացում և հետագա զարգացում): Ներկայացրեցին նաև ֆակուլտետի դեկանատի կառուցվածքային առանձնահատկությունները և աշխատանքի ընթացակարգերը: Հետաքրքրի էր այսպես կոչված դուալ կրթության վերաբերյալ ինֆորմացիան, որը ներկայացվեց հանդիպման ժամանակ:

Կասսելի համալսարանում հանդիպու եղավ Ուսուցման և դասավանդման դեպարտամենտի պետ Մարիոն Շոմբուրգի, այդ նույն դեպարտամենտի որակի ապահովման պատասխանատու տիկ. Բոեմանսի հետ: Նրանք ներկայացրեցին Կասսելի համալսարանում որակի ապահովման համակարգերը, օտարերկրյա ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման ընթացակարգերը, միջազգային ծրարգրերի կազմակերպման հարցերը, ինչպես նաև ուսանողների աջակցության համար գործող հատուկ կազմակերպության «Staff Studentencocrk» նպատակներն ու աշխատանքի սկզբունքները:

Ֆուլդայի կիրառական գիտությունների համալսարանում հանդիպում եղավ համալսարանի պրեզիդենտ պրոֆ. Խակզարի և պրոֆ. Ֆրեդրիկ-Կարլ Լյուկեի հետ: Պրեզիդենտը ներկայացրեց համալսարանի ուսումնառության առանձնահատկությունները, ուսանողների աջակցության գործող մեխանիզմները, համալսարանի կառուցվածքը, կրթության ընդհանուր առանձնահատկությունները Հեսսենի տարածաշրջանում:

Հանդիպումներ եղան նաև Հելգա Կեյլի և Սննդի և սպառողների ուսուցման դեպարտամենտի հավատարմագրման հարցերով պատասխանատու պրն. Մարկուս Ֆեսլերի հետ: Մանրամասնորեն քննարկվեցին ներքին և արտաքին հավատարմագրման ուղղությամբ նախկինում կատարված և ներկայումս ընթացող աշխատանքները, հավատրամագրման ընթացակարգն ու դրա իրականացման ֆինանսական աղբյուրները և շատ այլ հարցեր՝ կապված եվրոպական հավատարմագրման և որակի ապահովման մեխանիզմների հետ:

Քննարկումներ եղան նաև Սննդի տեխնոլոգիաների դեպարտամենտի պետ պրոֆ. Էսպերի հետ, որը ներկայացրեց իրենց դեպարտամենտի կառուցվածքը, մասնագիտական ուղղվածությունները, դասավանդման առանձնահատկությունները, շրջանավարտների հետագա աշխատանքով ապահովման խնդիրները և այն, որ իրենց մասնագիտության գծով սովորում են ոչ թե 6 կիսամյակ, ինչպես ողջ Գերմանիայում է, այլ 8:

Առանձնահատուկ կարևոր էր հանդիպումը պրոֆ. Յոհան Յանսենի հետ՝ Կերակրման/ սննդի և սպառողների ուսուցման դեպարտամենտից: Նա հանգամանորեն ներկայացրեց իր կողմից կազմված և որակի ապահովման համակարգի պարտադիր պահանջներից մեկը հանդիսացող փաստաթղթերի կառավարման և տեղեկատվության տրամադրման էլեկտրոնային համակարգը: Նա ներկայացրեց վերոհիշյալ ծրագրի մշակման առանձնահատկությունները, այնտեղ ներառվող ինֆորմացիաների խմբերը, դրանից օգտվելու ձևերն ու հասանելիության աստիճանը աշխատողների և ուսանողների համար: Նա ուղղորդեց նաև, թե ինչպես կարելի է սկսել նման ծրագրի ստեղծումը:

Գերմանիայի դաշնություն գործուղման վերջին օրերին ըստ ծրագրի այցելություն եղավ Բեռլինում կազմակերպված և գյուղատնտեսությանն ու գյուղին վերաբերվող յուրահատուկ մի միջոցառման, որտեղ յուրաքանչյուր տաղավար ներկայացնում էր գյուղատնտեսության հետ առընչվող որևէ ուղղություն (կենդանաբուծություն, սննդի տեխնոլոգիաներ, օրգանական սնունդ և այլն):

Ծրագրի արդյունքները ամբողջովին ներդրվում են ուսումնական գործընթացում, որը կրելու է շարունակական բնույթ:

Ծրագրի հաշվետվությունը քննարկվել է աշխատակազմի նիստում, ներկայացումը կիրականացվի ռեկտորատում ս/թ սեպտեմբերին, իսկ արդյունքների մասսայականությունը կիրականացվի ՀՊԱՀ լրատվական միջոցներով (''Հասկ'' թերթում) և կտեղադրվի ՀՊԱՀ կայք էջում:

7. *Ծրագրի ծախսերը (հ. դր)*

	Հոդվածներ	Նախատեսված			Փաստացի		
		ԴԾ	ՀՊԱՀ	Ընդամենը	ԴԾ	ՀՊԱՀ	Ընդամենը
1	**Գործուղում, այդ թվում՝**	1800	-	1800,0	1800,0	-	1800,0
	2 վարչ. աշխատող	1200		1200	1200	-	1200
	1 դասախոս Ստեփանակերտի մասնաճյուղից	600		600	600	-	600
2	**Տեխնիկական միջոցներ, այդ թվում՝**	-	900,0	900,0	-	900,0	900,0
	Համակարգիչ և պրինտեր	-	360,0	360,0	-	360	360
	Պատչենահանման սարք	-	230,0	230,0	-	230	230
	Պրոյեկտոր	-	310,0	310,0	-	310	310
3	**Աշխատավարձ՝**	1200	-	1200	1200		1200
	Համակարգող	360		360	360		360
	Աշխատանքային խմբի անդամ	300		300	300		300

	Աշխատանքային խմբի անդամ	300		300	300		300
	Օպերատոր	240		240	240		240
4	Ընդամենը	**3000,0**	**900,0**	**3900,0**	**3000,0**	**900,0**	**3900,0**

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ՝

ՀՊԱՀ ուսումնական աշխատանքների
գծով պրոռեկտոր *ՅՈՒ. ՄԱՐՄԱՐՅԱՆ*